

## Հաշվետվություն

Արարատի մարզի Մրգավետ համայնքի ղեկավարի 2015թ-ի

առաջին կիսամյակում կատարած աշխատանքների

01.07.2015թ. Մրգավետ գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որը վարում էր

համայնքի ղեկավար Լ. Աբրահամյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար՝

Ն. Կարապետյանը: Հանրային լսմանը ներկա էին գյուղապետարանի

աշխատակազմը, դպրոցի տնօրեն՝ Վ. Զոհրաբյանը, մանկապարտեզի վարիչ՝

Ժ.Մնացականյանը, հայփոստի աշխատակիցը, բուժ. ամբուլատորիայի աշխատակցուհին

Լսեցին- Մրգավետ համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2015թ. հուլիսի 1-ի

դրությամբ կատարած աշխատանքների վերաբերյալ:

Արձանագրվեց, որ առաջին կիսամյակում կատարվել են հետևյալ աշխատանքները:

Գյուղապետարանում բնակչությունից ստացվել է 50 դիմումներ, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստի ժամանակ, և տրվել են համապատասխան լուծումներ:

2015թ. հուլիսի 1-ի դրությամբ գյուղապետարանը բնակիչներին տվել է 177 տեղեկանք, ստացել 70 պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:

2015թ. առաջին կիսամյակի ընթացքում կազմակերպվել է համայնքի վարչական տարածքում սանմաքրման աշխատանքներ, որոնք կրել են պարբերական բնույթ՝ մաքրվել են ոռոգման առուները և փողոցները: Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել են հողամասի չափագրման, սահմանների ճշգրտման, հողամասերի փոփոխման և ձևակերպման աշխատանքները:

Նշվեց անապահով ընտանիքներին, հարազատին կորցրած անձանց անհատույց հատկացումներ կատարելու մասին: Համայնքի սոց. անապահով ընտանիքներին տրվել է 1.791.000 (մեկ միլիոն յոթ հարյուր ինսուսմեկ հազար) դրամ, հարազատին կորցրած անձանց տրվել է 50.000 (հիսուն հազար) դրամ ֆինանսական աջակցում, աղբահանության աշխատանքների կազմակերպման հարցում հատկացվել է 580.000 (հինգ հարյուր ութանասուն հազար) դրամ:

Կառավարության կողմից սուբսիդավորված 1 պարկը 6000դրամով ազոտական պարարտանյութ է


հատկացվել բնակչներին:

2015թ առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ  
հարկատեսակների

1.Հողի հարկ – 2.656.000

2.Գույքահարկ –1.052.000

3.Տեղական տուրքեր –212.000



Լ. Աբրահամյան